# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 31 » հունվարի 2020թ. № 15-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի №46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, հաշվի առնելով Լոռու մարզպետի 15.01.2020թ. N 01/107.4/00300-2020 գրությունը՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման հաջորդ օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2020թ. հունվարի 31**
**գ. Լոռի Բերդ**

Հավելված.
ՀՀ Լոռու մարզի
Լոռի Բերդ համայնքի ղեկավարի
2020թ. հունվարի 31-ի
թիվ 15-Ա որոշման

# ՊԼԱՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանա-տու | Կատարող-ներ | Մասնակիցներ | Նշում-ներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | **1.Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ** | | | | | |
| 1.1 | Մասնակցություն ՀՀ Լոռու մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը. հատկապես համայնքներում, սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը: | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժա-նումներ | ՄՓՎ անձնակազմ, Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք | |
| | **2. Ընդհանուր պատրաստություն** | | | | | |
| 2.1 | ԱԻ-ներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում պատրաստվածության բարձրացման հարցերը: | 15.06 | Լոռու մարզպետ, | ԱԻՆ Ճգնաժամային | Լոռի Բերդ համայնք | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կառավարման Պետական ակադեմիա | | |
| 2.2 | Երեխաների անվտանգության մշակույթի ձևավորման հարցերը | 22.04 | Լոռու մարզպետ, | ԱԻՆ Ճգնաժամային Կառավարման Պետական ակադեմիա | Լոռի Բերդ համայնք | |
| **3. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ** | | | | | | |
| 3.1 | ՀՀ Լոռու մարզի ապաստարանների պահպանության վիճակի ուսումնասիրությունների անցկացման ընթացքի վերաբերյալ զեկույցի ներկայացում: | 26.06<br>25.12 | ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | ՄՓՎ անձնակազմ, Լոռի Բերդ համայնք և կազմակերպություններ | |
| 3.2 | ՀՀ Լոռու մարզի համայնքների խոշորացման գործընթացից ելնելով 3-րդ կարգի պահեստային կառավարման կետերի ցանկի ճշգրտում | Տարվա ընթացքում | Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ | ՄՓՎ ստորաբաժանումներ | Լոռու ՄՓՎ անձնակազմ, Լոռի Բերդ համայնք | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ А. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ